



157. ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԿԲԵՐԻ

Մին թաքավերի ասում ա.—Քյիննալ պիտիմ մին հունց ախշարք, վրեր ինձանա լավ ապրող շինի։ Հղե յա իննւմ, քյիննամ։ Շատ ա քյինամ, թա խրեգյ մին հեռու տընդ մին շորան ա պտահում։ Չորանը տրան հրցընում ա, թա՝ հու վը՞ս, հինչ ը՞ս, հիշտեւ ը՞ս քյիննամ։ Տա թա՝ ես էսհինչ երգյիրին թաքավերն ըմ, քյիննամ ըմ հունց երգյիր, վրեր ընդեղ ինձանա լավ ապրող շինի։ Տի վրեննը կացած զրոնց ընելիս վախտը շուրանեն վրետանը քընթը տափեն նի յա կյամ, մին վրեսկե յա տոնւ կյամ, կուանում ա յոր օնում։ Մեհետ էլ վրեր տափեն-քացի յա տամ, մին քանի վրեսկե յա տոնւ կյամ։ Չորանը թաքավերեն ասում ա.—Հենց ա ըստեղ շատ վրեսկե ինի՞, քանդինքյ, տընանք։ Չորանը հրցընում ա, թա վրեր վրեսկեն քթենանք, հունց պիտի՞ ճոթ անենք։ Տա թա՝ դե ես թաքավերի մարթ ըմ, տու՝ շորան, իրեքը-շորսը ես յոր կօնեմ, մինը քեզ տամ։ Չորանը թա՝ դե հղետ քյինա, վրերդեղ էլ հանես, տու լավ օր շըս տըսնըլական։

